ւերժատերեւ և պըտղատու, յորդորէր զանապատաւորսն ի նոյն վաստակ և ի ջանս՝ բանիւ և գործով։

Ո՞վ հոգևոր ծըպուանն. անխափան երգողին զյաւդաւորն և զօրականն,[ա] որ զարդարէր զանապատն ամս յոլովս, և ինքն յինքեան ուրախ լինէր երանելին. գովէր զխուղն՝ և գրգուէր զամայութիւնն ասելով։ Ո՞վ թաքուն զանձ՝ և անպարապ պարգև. խաղաղութեան մայր՝ և ողջախոհութեան աւիթ, երկնային քաղաք՝ և անմատչելի զղեակ, անխըռով վայր՝ և անքոյթ նաւահանգիստ. զըրունք պատուհանիցս՝ և արմատահատ ախտից. բարձրագոյն տեղի՝ աստուածոց բնակութիւն՝ և հրեշտակաց մերձաւորութիւն։ Ոչ գոյ ի քեզ աներկիւղ երկիւղ՝ և ոչ ծառայութիւն. կարծեմ թէ դու ես արքայութիւնն. վասնզի ի քեզ տեսաւ անտեսանելին և երևեցաւ աներևելին,[բ] ծնաւ անշունչն զշնչաւորն՝ և անարիւնն զարիւնաւորն, անըզգայն զզգայունն՝ և անշարժն զշարժունն։ Ի քեզ վառեալ չընչին[գ] բանական բոցովն, կոչէր զհալածեալն՝ և հալածողին[դ] առաքէր Աստուած.

ա. Լուս. «Ձայնն»:

բ. Լուս. «Լեառն Սինայ եւ Մովսէս»:

գ. Լուս. «Մորենին»:

դ. Լուս. «Փարաւոն»: